

Հ Ա Ս Ց Է

Rédaction du Journal arménien


ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE

Չի հրատարակուած ձեռագիրները  
ես չե՛ն տռոյր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ  
ծանուցումները կ'ընդունուին մասնա-  
ւոր հաւանձայնութեամբ :

Քառասուն հարգութեամբ  
ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ



Ա Ջ Գ Ա Յ Ի Ն, Գ Ր Ա Կ Ա Ն, Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Շ Ա Բ Ա Ք Ա Ք Ե Ր Ք

ՊԵՏՐՈՒՍԻ

ԵՂԻՇԷ

Տարեկան գրե - ողջ 30

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան փրակց 10

Բաժանորդի ՅԱԽԵՆՈՒԾ ԵՆՈՒ փոխարէն  
վճարուա՛լէ գերծ պիտի ըլլան :

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ  
վերաբերեալ նիւթական խնդրոց հաւար  
պիտի հ ղիւնէլ նիւթագրութեան հասցեով  
րեքիս Մասնախարհին, որ է՝

ՊԵՏՐՈՒՍԻ ՓՈՒՊՈՂՆԵԱՆ

ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇՍԲԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանու-  
ող են իրենց գրածներուն

ZUSC 20 ՓԱՒԱ ՈՂՁ

ՆԱՍԱԿ ԳԱՅԻՐԷՆ

Պատ. նիւթագրութիւն « ԱՐՇԱԼՈՅՍԻ »-ի  
Ի Քաղաքին

Յեռագայ գրութեան հրատարակութիւնը  
կը խնդրուի, իբր նշխարաւորութեան  
արտայայտութիւն մը իմ կողմէն :

ՎԱՐԴՈ ԵՒ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Յեղափոխութեան անդրանիկ  
ճաճանջներու հետ կ'սկսի այս երկու  
անուանի անձերուն գործունէութիւնը  
նր. մին Ռուսահայ, իսկ միւսը Տաճ-  
կահայ : 1890ի դէպքերուն մէջ բո-  
ցավառ եւ մեծագործ դեր մը ու-  
նեցան : Ու անկից յետոյ 20 տարի  
չարունակ քաղցին յեղափոխութեան  
ցանցոտ եւ խառնաշփոտ ասպարէզէն :

Բայց վերջերս յանկարծ կանգ  
առին իրենց դնացքին մէջ : Ժամա-  
նակի փորձառութեամբ եւ տարիներ  
բոլոր գաղտնիքներով զինուած՝ փոր-  
ձեցին կռիւ մղել իրենց ճանչցած  
տեղեկութիւններուն դէմ, սակայն  
աւա՛ղ, խիստ կարճատե եղաւ ի-  
րենց ընդդիմութիւնը, ու ահա եղ-  
բայրասպան ձեռքը հարուածեց զա-  
նոնք, իրենց բոլորքը իրենց արեանը  
մէջ խեղդեցուց :

Վարդօն. - մենք Պուլկարաբնակ  
հայերս, տասը տարի զինքը տեսած  
ու լսած ըլլալով՝ քիչ թէ շատ ծա-  
նօթ էինք իր կացութեանը : Անիկայ  
իր կուսակցութիւնը զորացնելու, ա-  
նոր տեղեկութիւններուն արտաքին  
փայլ տալու համար՝ շատ անգամ  
մոռցաւ անկեղծութիւնը ու անաչա-  
ռութիւնը : Սակայն եւ այնպէս իր  
խոհալին մէջ կորովի, յանդուգն,  
քաջ խեղճախող մ'էր . . . : Ասկից  
յետոյ թերեւ իր խղճամիտ գործու-  
նէութեամբ կրնար օգուտներ ընծա-  
յել, եթէ գնդակահար չ'ընէր Ռուս-  
ճուգի մուկ փողոցի մը մէջ :

Նորութիւն մը չէ եղբայրասպա-  
նութեան սխթմը : 1900էն ասդին  
սպանուածներուն դիակները կրնան  
բլրակ մը յորինել, իսկ տակաւին  
թարմ է Վարդօնի սպանութիւնը, որ-  
մէ երեք շաբաթ առաջ, երբ եղիպ-  
տոս մեկնելու համար Պուլկարական  
Շոգենաւը կը գիւղէինք քանի մը լա-  
րեկաններու հետ, Վարդօ ալ միա-

տեղ կուգար ողջը մաղթելու կամ  
օգնելու համար մեզի, որովհետեւ  
նաւապետը իր վարդիմի բարեկամ  
Ռուս երիտասարդ մ'էր : Օգը ցուրտ  
էր. ձիւնախառն քամին կատաղի-  
օրէն կը փչէր. վերջապէս նաւ հաս-  
նելով՝ նաւապետին խօսեցաւ պէտք  
եղածը, որով մինչև Աղէքսանդրիա  
զգալի զեղջով մը հանդիստ ճամ-  
բորդութիւն մը կատարեցինք :

Ի՞նչ չ'մեկնած՝ երբ շնորհակա-  
լութիւն կը յայտնէինք իրեն, նա  
ժպտելով մը ըսաւ :

— Ես իբր հայ, պարտաւոր եմ  
օգտակար ըլլալ իմ աղբակիցներուս :  
Երեք շաբաթ յետոյ մեր բա-  
ժանութեան հոս Գահիրէ կը տեղե-  
կանանք հէգ մարդուն սպանութիւ-  
նը . . . ու միեւնոյն ատեն կարգ մը  
միամիտ շրթունքներ կը մըմնջեն :

— Աղէկ եղաւ. թող յեղափո-  
խութեան փարան չ'ուտեր . . .

Եթէ այսպէս ըսողները Վար-  
դօնի ներքին կացութեանը տեղեկ  
ըլլալին, այսպիսի անտարբեր սառ-  
նութեամբ չ'պիտի վերաբերուէին  
անոր եղբարական սպանութեան հան-  
դէպ :

Ճաստ տարի շարունակ իր «Շար-  
ժում» թերթովը յեղափոխութեան  
ճառայից. երբեմն մոռցաւ ճշմար-  
տութիւնը, կատաղի անձնուէր էր  
նա իր գաղափարի կուսակցութեանը  
համար, եւ ու է վարձատրութիւն  
ալ չէր պահանջէր իր ծառայու-  
թեան փոխան, եւ ուր ուրեմն վաշ-  
խառուի մը սաղբանքներուն զոհ-  
ուելով՝ իր կանքը վրայ կուտայ :  
Թշուառ մարդը սպանուելէն երկու  
ամիս առաջ ծախու կը հանէր իր թէ-  
յամանն, սեղանի ուրիշ քանի մը  
մնացորդ սպաններու հետ, սրպէսզի  
հաց գնելով իր զուակներուն անօ-  
թութիւնը մեղմացնէ : Սպանուած  
միջոցին ալ տասը փարայ կայ եղբ  
զբազանը :

Ի՞նչ կը թողու Վարդօ՞ . . .  
Անմխիթար այրի մը, երկու հը-  
րեշտակադէմ մանուկներ, կարօտ եւ  
թշուառ :

Ի՞նչ կը թողու Արփիարեան . . .  
Անուն մը. կրնա՞նք համարձա-  
կիլ ըսելու վտեմ, մաքուր անուն  
մը . . . :

Իրաւ է. անիկայ սպանուելէն  
յետոյ իշխանավայել յուզարկաւորու-

թեամբ թաղուեցու. մեծակառոյց,  
երկնալաց դամբանականներ ողորդեցին  
ժողովներով ծածկուած դագաղը .  
« Գնա՛ մեռիւր, եկու՛ր սիրեմ » բու-  
րոյ ներբողականներու մէջ պահ մը  
հրճուեցաւ իր հոգին. բայց ի՞նչ  
մեծ տարբերութիւն բնական եւ զե-  
րական մահերու մէջ : Եղբայրաս-  
պանութիւն մը ա՛ս ալ. միասարձեր  
գաղտնիքներու, գեղձոններու աղ-  
գարար ձայնը խափանող, ոչնչա-  
ցընող . . . :

Իր վերջին « Հողվորութիւն » ծայ-  
րէ ի ծայր Վարդօնի Պօլոյ մէջ ու-  
նեցած գործունէութեան շրջանը կը  
պատկերայնէր, իր գիտցածին հա-  
մաձայն :

Անիկայ Վարդօնի եռանդուն ան-  
համբեր, յախուռն փրատակար գոր-  
ծունէութիւնը կը ձողկէր . . . ան կը  
մատնանջէր ա՛յնպիսի թերութիւններ  
որ առաւել կամ նուազ ամէն ոք  
ունեցած է իր անցեալին եւ նոյն իսկ  
ներկային մէջ :

Արփիարեան երբ զգուանօք կը  
գատափետէր Թաւշանճեանի սպան-  
նիչները, անգին իրմէ հաշիւ կը պա-  
հանջուէր Գարակէօզեանի սպանման  
դէմ : Կը ցաւինք որ Արփիարեանի  
ցոյց տուած փաստերն ու հերքում-  
ները զորաւոր եւ համոզիչ չ'եղան այդ  
« զրպարտութեան » . . . եթէ զրպար-  
տութիւն էր. մինչդեռ Վարդօնի ըս-  
պանման առթիւ տեսէք ինչ կը գրէ  
իր վերջին « Հողվորութիւն »-ի մնացորդին  
մէջ :

« Գերմարդկային արգարութիւն  
էր, որ մուկ գիշեր մը Ռուսուքի  
փողոցներուն մէջ, 1906 ին թափ-  
ուած արիւնին վրիժառու պատուհա-  
սը տնօրինեց, նախապէս բարոյական  
պատժագրութեամբ մը. — Պ Ա Տ Ի Ի  
Ո Չ Ն Չ Ա Յ Ո Ի Մ » :

1896 ին թափուած արիւնին  
պատասխանատուն ինչո՞ւ համար մի-  
նակ Վարդօն պէտք է բռնենք . . .  
անշուշտ այսպիսի յանդուգն ծրագ-  
րի մը գործադրութիւնը վճռելու  
համար ուրիշներ ալ համակարծիք  
էին. օտար նաւատորմիչներու յան-  
կարծական մուտքը թերեւս դիւա-  
նադէտներու կողմէ յորինուած խաղ  
մ'էր : Արգարութիւն չ'պիտի ըլլայ  
առանց որոշ բան մը գվտանալու 96 ի  
աղէտքը հէգ Վարդօնի վերաբերել  
քանի որ՝ Վարդօն՝ Արփիարեանի

բացատրութեան համաձայն, « Գեր-  
մարդկային արգարութիւնը չարա-  
չար մահով մը պատժեց զայն. »  
ուրեմն այդ գերմարդկային արգա-  
րութիւնը՝ արգար ըլլալու համար՝  
պէտք էր որ Վարդօնի մեղսակիցներն  
ալ պատուհասէր. եթէ կը զիջանիք  
եղբայրասպանութիւնը գերմարդկա-  
յին արգարութիւն կոչել :

Սպանուեցաւ Արփիար եղբունա-  
սէր գաւաղիւններէ թեղաբերուած  
ձեռքերով : Իր թերութիւններն ալ  
ունենալով հանդերձ՝ անիկայ կարող  
էր տակաւին օգտակար ըլլալ իր  
աղբին, սակայն աւա՛ղ, արիւնա-  
խանձ սրտեր գոնէ չ'խղճացին ա-  
նոր յառաջացած տարիքին : Իր ապ-  
րուտը թէ՛ կ'ընթացէ խիստ ան-  
ձուկ, սակայն թաղումը շատ փա-  
ռաւոր եղաւ : Կը լսենք թէ՛ հան-  
գանակութիւն մը բացուած է մա-  
հարձան մ'ալ կանգնելու համար իր  
վրայ : Թող ներուի մեզ կարծել թէ՛  
իրեն թաղման եւ մահարձանին հա-  
մար եղած ծախքերուն չափ գումար  
մը եթէ գրպանը սեննար կամ տը-  
ուէր իրեն, Արփիարեան վերահաս  
այդ փորձութիւնէն ալ պիտի կարե-  
նար ճողոպրիլ :

Սպանուեցաւ նաև Վարդօն՝ եւ  
իր մարմինը փոսին մէջ նետուեցաւ,  
ու թերեւ շուտ պիտի մոռցուի ժա-  
մանակուան մեծ գործիչին հողակոյ-  
տին հետ եւ՝ անունն ալ :

Թուրքիոյ մուսլ բանտերէն ինչ-  
ուան Սիպերիոյ սառերուն վրայ աք-  
սորական քաղցտուեցաւ . . . տառա-  
պեցաւ . . . եւ ահա իր կրած բոլոր  
զրկանքներուն իբր վարձատրութիւն  
գնդակի երեք հարուածներ կընդու-  
նի իր ճակտին . . . : Մինչդեռ ան-  
գին երկու սիրունիկ ու անմեղունակ  
որբիկներ իրենց վշտահար մօր սրտին  
վարած՝ կուլա՛ն իրենց հօր անդարձ  
կորուստը, կ'արտասուեն իրենց թըշ-  
ուառ ու կարօտ վրճակին վրայ, սի-  
րուն աչքերնին խոժոռած վարդա-  
կուօն շրթերովն անէ՛ծք կարգա-  
լով զիրենք այդպէս թշուառացնող-  
ներու հասցէին : Խե՛ղճ որբուկներ :  
Ս . Գ .

Վերապահումներով կը հրահարակենք մասնաճյուղի արհեստագործական փաստաթուղթի ծառայողին Լ. Ս. Շահյանին յետագայ գործընթացը, ուր բանակարի մեջ ծրարած փոփոխումները կը ստիպեն հասցիները անհետաձգելու...

ԿԵԱՆՔԸ ԳԱՀԻՐԷՆ ԿԵՂ

Ա.

Կերպար է, ժամը երկու կէս օրէ վերջ. քայլերս կ'ողզեմ դէպի Աթապա - էլ ինտարա, ուսկից հանրակրթական կ'առաջնորդէ մինչև Ապագայի. եւ անկից օմնիպիւսը զիս կը տանի մինչև Հէլիոփոլիսի Ուոլտիսը. հոս միջանկեայ ըսեմ թէ՛ օմնիպիւսին մէջ ժամանակին անկ կարենալ գտնելու համար հարկ է մարմնամարզի եւ բարձրամարտութեան նախապատրաստութեան ծանօթ ըլլալ:

Ասկից ամիսներ առաջ երբ անգամ մը այցելեցի Ուոլտիսը, ապա ինչ միայն փողոցները գծուած էին եւ ջրի խողովակները կը գրուէին, ու անդին իրեւ չէնք միայն պատրաստ մը կար աւոր ալ չիտեմքընը նոր ս'ստեւած: Երբ այս վերջի անգամ այցելեցի փոփոխութեանը զգալի էր, հսկայ պանդոկը աւարտելու մօտ, անոր կից երկրորդ պանդոկ մը - Family House - բարձրացած, զէմը չէնքերու ամբողջ շարք մը քիչ անդին ամբողջ փողոց մը 10-12 ստանդէ բաղկացեալ, միւս կողմէ երկու ամբողջ փողոցներ չէնքերով գծուած՝ աւելի անդին հսկայ յարկարածին մը - Garden City - խանութներով միասին ամբողջովին աւարտած եւ ուր ցիր ու ցան բնակութեաններ իսկ հաստատուած է. երկաթուղւոյ գիծը զետիւր պակաս կառավարութեան հրամանին կը սպասէ իր շարժումը ցոյց տալու, հոս ու հոն սրճարաններ ու գարնջատուներ, մաքուր օդ մը կը փչէ, եւ թէպէտ տակաւին քաղաքը աւարտելու համար բաւականին զբաւաղելի եւ ժամանակի ալ կը կարօտի, բայց համեմատապէս մտաւոր ապագայի մը մէջ Գահիրէ պիտի ունենայ՝ Հէլուանէ, Ջէյթիսիս եւ Մաթարիէէ զատ՝ մի նոր արուարձան - Հէլիոփոլիսի Ուոլտիսը:

Եւ եթէ, ըստ Ս. Գրոց, Մոսկէս իր պաւաղանովը ջուրը ցամաքի փոխեց, հոս մարդկային ճարտարագիտական միտքը՝ միացած զբաւաղելի՝ աւազը անապատը քաղաքի վերածեց եւ ըստ բնակելի, անա այս ստեղծագործ մտքին արդիւնքին է որուն հանդիսատեսը կ'ըլլանք ոչ նուազ սքանչազմամբ:

Բ  
Եթէ անդին Ուոլտիսի մէջ շարժում մը կը սիրէ չէնքի, շինութեան. հոս ալ մեր մէջ շարժում մը կայ լրագրական եւ թատերական:

Երկարատեւ զարգացում արտասահմանի մէջ՝ հակառակ մտաւորական կարեւոր ոյժ մը ներկայացնելուն, չ'ունի զբաղան արտադրութեաններ եւ ողով չ'կայ հոս գրական տարի. հոս գրականութեան ըսելով լրագրութեան պէտք է իմանալ, քանի որ թերթերու սրճարաններուն մէջ եւ ատոնց միջոցաւ միայն պարբերաբար երեւան կուգայ մտքի արտադրութեանները առաւել կամ նուազ արժէքաւոր:

Մտոյղ է թէ Ընթերցատան կողմանէ կրնայ «հարց - պատասխաններ» մը հրատարակուիլ, եւ կամ «Քաղաքական փողովոյ պատասխանը» երեւիլ:

բայց ատոնց եւ ոչ մին գրական օրէ մակարդակ չ'են ներկայացներ: Ծանին շնորհազոյ 1908 թուականը կը թեւակոխենք եւ անա կը վերերի «Արշալոյս»-ը, որը ժամանակէ մը ի վեր գործած էր, եւ ճիշտ այն պահուն երբ ոչ ոք, ոչ մէնք ընթերցողներս եւ ոչ ուրիշներ կը մտածէին անոր հրատարակութեանը, եւ անա կ'երեւի թերթը եւ կը զարմացնէ զիս եւ ինձի նետ շատերը:

«Արշալոյս» նախորդ շրջանին մէջ անցած է ամէն բովերէ, ունեցած է իր սակեղարը եւ... երկաթի դարն ալ. այս անգամ որ կրկին կ'երեւի Երկրորդ տարի շորիզներին վրայ, իր նետ ապահովարար կը բերէ փորձառութեանց պայտը մը ինչ որ մեծապէս կրնայ ապահովել թերթին յարատեւութիւնը:

«Արշալոյս»-ին անմիջապէս կը յաջորդէ Փետրվար 1ին, «Նշարակ»-ը: Թայանի չ'է թէ «Նշարակ» որու կողմանէ կը հրատարակուի. հրատարակչը, Տէր եւ Տնօրէնը եւ խմբագրապետը «բոստանիկ» թիւ 985-ին է՝ Լատիս լատ յանձնարարելի չ'իմ գտնելու մակատուփը պատասխանատու ճանչնալը Հրատարակութեան համար պարբերական» ըսուած է: այսինքն ոչ ոք չի գիտեր ամբողջ կամ տարիներ քանի անգամ եւ տարւոյն որ օրերը երեւան էլլելը:

Անա երկու ամսուան միջոցին երկու թերթեր. անշուշտ քանակէն կարելի չ'է միշտ չափել որակը, բայց փոթորակութեանը որ ցոյց կը տրուի հրատարակութեանց մէջ քաջալերական է:

Լրագրականին աւելի փայլուն է թատերական շարժումը:

Մ.Է. Ժողովի իր հոտը ունի. թատերական ամէն շրջան իր ուրոյն բոլորը 1906ին Ֆելէկեան քոյրերը փայլեցան, 1907ին Արմէնեան ամուլը եւ այս տարի ալ Տիկին Սիրանոյշ:

Այս տարուան Կարգադիր Մասնախումբը գնահատելի մտապետ մը ունեցած էր. պնակաշրջութեան գրութեանը պարզ էր այս տարի, եւ ստեղծելու անսակ ժամանակ մը որ արդէն պայտը կը մղուի եկեղեցւոյ մէջ պնակի շրջապատութեան գէմ, թատրոնի շրջապատը նուազ նպատակայարմար է ատոր... նոյնիսկ իմէ այդ շրջապատութեանը բարեփոխուած ծաղիկներով շրջապատուած ըլլալ:

Ինչպէս անցեալ տարի Տիկին Արմէնեան, այս անգամ ալ - եւ աւելի մեծ իրաւամբ - Տիկին Սիրանոյշ ունեցաւ իր շքանայեցող Փետրվար 5ին, ներկայացուած խաղը ըլլալով Գամելիա Տիկինը, յաջող օրքան է խաղը իր գրուածքին մէջ՝ Տիկինի գրչին եւ լամ, նոյնքան եւս յաջող էր - զէթ մեր շրջանակներուն մէջ - իր ներկայացուած Տիկին Սիրանոյշով, որանք ամէն օրերք գրուած էր, ինչ որ եթէ մէկ կողմանէ ցոյց կուտայ Կարգադիր Մասնախումբին ջանքերուն շօշափելի հնչուն արդիւնքը, միւս կողմանէ ալ յայտարար մէկ նշան է Գամելիի Հայոց գնահատման առ կարող զերասանութեան որպէս է Տիկին Սիրանոյշ:

Պզտիկ գիտողութեան մը որը՝ փոթորած ըսելու թէ՛ խողին եւ զերակատարներուն հետ օրէ կուգ չ'ունի Բազմութեան մէջ նշմարելի պարուն մը, զոր ճանչնալու պատիւը չ'ունի, որ իր հետ ընթաց էր շուրջ - երեւոյթէն զատելով ի հարկին ինքզինքը յարդիլ:

(\*) Մ. Ս. «Նշարակ» զարգացած է կ'ըսեն, իսկ բոստանիկի կամ կսակի պաշտօնակալ բուցուելու մտաւոր ճեղքի պիտի ունենայ: Այն ասեմ հեռախօսակեր կըրնան կարեւոր ծանօթութիւններ ունենալ:

ատող տեսակէն: Նախ ըսեմ թէ՛ երբէք օրէ հակակրթութեան չ'ունիմ արդ հաստատարի եւ ընտանի կենդանիին համար, ընդհակառակը, միայն կը կարծեմ թէ թատրոնը իր միջավայրը չ'է, չ'է՛ մի, եւ եթէ ամէն ոք նոյնը բնական ըլլայ, հետեւանք կը թողում սիրելի ընթերցողին:

Առաջիկային Կարգադիր Մասնախումբը այս անպատեհութեան առաջը անհետ համար կրնայ երկու միջոց ձեռք առնել, կամ խոշոր տատերով ազդ մը փակցնել դրան, ուր գրուած ըլլայ:

«Մուսքը ջարհանկներու հաւարարդիւնը» եւ կամ կենդանիներու համար յատուկ սակացոյց մը պատրաստել - ինչպէս կայ արդէն երկաթուղիներու եւ շոգեխանիներու համար - եւ ըստ այնմ ամսակ պահանջել, այս վերջին եղանակով լիպտա անպատեհութեանը մէջ անկէն վերցած չ'ըլլար, բայց զէթ գոհացում արուելով հանդերձ «Պատկանեալ անձերու» հասոյթի անուկնալ եւ նոր աղբիւր մը ստեղծուած կ'ըլլայ խումբին:

Գահիրէ 17 Փետր. 1908

Յ. Ս. ՇԱՀՅԱՆ

ՀՈՅԵՀԱՆԳԻՍ

Այրի Տիկին Նեմզար Բոլաւեան եւ Տիար Երուանդ Գալուսեան կը ծանուցանեն իրենց ազգականաց եւ բարեկամաց թէ՛ այսօր 2-րդ քաղաք թի 26 Փետր. (Ն. Տ.) առաւտեան ժամը 9 ին, Գալաքիս Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ ի Պէն-էլ-Սուբէն, Ս. Պատարագ եւ պաշտօն պիտի մատուցուի իրենց աղջկան եւ մօր՝

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ԳԱԼՈՒՍԵԱՆԻ (ձեռնաք թշնամի) հանդուստեան քառամորեակին առթիւ:

Ի Ր Ա Վ Ե Պ

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻԱՆ ՄԸ

ՆԵՐՔՆԱԿՈՂՄԸ

— Ա —

Այս վերջին տարիներու մէջ հայաստանի կարծիքը յուզող գոտական գործերուն մէջ ամենէն խորհրդաւորը ապահովապէս Մուրթեան - Լըկրա անունով ծանօթ դասն է՝ որ անոր գլխաւոր դերակատարներն էին մահովը հրապարակուելու:

Օրիորդ Սիւզան Մուրթեան քսան երկու տարեկան որբուհին ամբաստանուած էր իբր թէ իր պաշտպանին մահէն վերջը կեղծած ըլլայ ժամանկութեան սիրանալու ծառայող անոր մէկ կտակը ի վնաս մեղաւորին քրոջ Այրի Տիկին Լըկրայի:

Տիկին Լըկրա ժամանկութեանը կը պահանջէր յայտ սրբերով որ պաշտպանեալ Օրիորդին կողմէ ներկայացուած կտակը կեղծ է եւ ընդհակառակը իր մօտ գտնուածն է ճշմարիտը, որ իր կողմը վերջին կամքին համաձայն գրուած՝ կը յանձնարարէր իր բանալի զայն եթէ անոր թուականը միւսէն աւելի էին չէ:

Բայց, կ'ըսէր Տիկին Լըկրա, միւսը Օրիորդ Մուրթեանի կողմէ չ'ունուած է կտակողին մահէն վերջը եւ խեղճին հարատեւութեան աւելի շուտ վա-

յելելու համար, մտնկամարդ աղջիկը փութացուցած էր անոր մահը հոգեւարարի պահուն անհեկին պատուհանը բաց թողալով:

Այս կրկին անբաստանութեանը բնէն միմիայն առաջինը այսինքն կեղծարարութեանը արդարութեան ուշադրութեանը պատուած էր քանի որ երկրորդը զիւրին չէր հաստատուել:

Այս միակ անբաստանութեանը սակայն կրցած էր յառաջ բերել ոճրագատ հարցաքննութեան մը՝ զոր վարելու կողմէն Մուրթեանի գէմը կը կանգնէր:

Իսկ անդին մտնկամարդ աղջիկը՝ թէպէտ արտաքին աշխարհէն բոլորովին հեռի եւ զուրկ պաշտպանի մը խորհուրդներէն՝ հոտնալով կը պաշտպանէր ինքզինքը: Բայց զգալիաբար իր թափած բոլոր ճիղերը սպորդիւն կը մնային որովհետեւ անիբաւ թէ իրաւացի, դատարար անգուժ յամառութեամբ եւ ջանքախիչ փաստերով իրեն գէմը կը զինուէր:

Վերջապէս արտաքին աշխարհի հետ յարաբերութեանը թոյլատրուած ըլլալով մտնկամարդ անբաստանալը կըրցու խորհրդակցելի իր ընտրած փաստաբանին հետ զոր անունով միայն կը ճանչնար:

Փաստաբանին անունն էր Սիւրբի Բէմի, որ թէեւ Բարիզիան փաստաբաններուն կրտսերագոյնը՝ նկատուած էր մէկն անոնցմէ՝ որոնք իրենց ցնցող եւ ներշուն պերճախօսութեամբ փայլուն ապագայ մը կը խոստանան:

Օրիորդ Մուրթեանի կողմէ հղած հրաւերը ստանալուն պէս վաղեց գնաց՝ որովհետեւ արդէն լրագրիւններու մէջ անոր մասին գրուածքներ եւ Օրիորդին իրեն գրած երկու նամակներ կարդացած ըլլալով՝ համարալից վերաբերուած մը սկսած էր ունենալ իր պաշտպանեալին հանդէպ: Սակայն դեռ տարտամ ու անուրձ ունէ կարծիք մը կողմէն առաջ կ'ուզէր նախ ամբաստանալը ըսել: Բայց երբ մտն ու նեղ բանտին մերկ ու խոնաւ պատերուն մէջ ընկնուած դտան զայն, երբ սեւաւ անոք նահատակի հրապարչի աղւորութեանը, երբ զիսեց անոր սրինքի խորհրդաւոր ու զրուանոյշ նայուածքը եւ փափուկ կաթնաթիւրը զէմը շրջանակող սուրբոյն մազերը եւ նուրբ հասակը ու երբ լըսեց անոր ետնալու լողոքները, համոզուեցաւ իսկոյն թէ անպարտ էր իր վրայ ծանրացող անբաստանութեանն եւ Օրիորդ Մուրթեանի վնասուած պատերին պաշտպանութեանը ստանձնեց այնպէս ինչպէս պիտի ընէր նոյն իսկ իր պատերին համար:

Այդ պատիւը պաշտպանելու մէջ խանդոտ ու հնարագէտ Տիկին Լըկրայի գործերուն մէջ փնտոնց ճշմարտութեան լաւագոյն միջոցները եւ սկսաւ այդ կընտրած անցեալ կեանքը պրպտել եւ կարողացաւ վերջապէս ապացուցանել թէ Սիւզան Մուրթեանի վնասուած մեծ փառք մը կար այդ կնոջ մէջ եւ իր մէջ խոստովող ժամանկութեան սէրը գտնուելու համար: Ժամանակաւ իր եղբորը տկարութեանն օգտուելով խուճած՝ ու յետոյ ոչնչացած կտակը գործածած էր Օրիորդ Մուրթեանը իբր կեղծարար ամբաստանելով:

Այս յայտնութեանէն քանի մը շաբաթ վերջը Տիկին Լըկրա ձերբակալուելով Բարձրագոյն գոտարոնին առջեւ կը դատուէր. եւ հակառակ իր յուսահատ լողոքներուն՝ ժամանակաւոր տաժանակիր աշխատութեան կը դատապարտուէր: Մինչդեռ Սիւզան, իր պաշտպան փաստաբանին շնորհիւ իր աղատութեանը կը վերստանար:

Այդ մեծ օրուան հետեւալ օրը երբ զիրար տեսան, Օրիորդ Մուրթեան իր փաստաբանին հանդէպ ունեցած երախտիքը ինչ կերպով կարենալ յայտնելու հարցուց, եւ նոյն պահուն ձեռքը ստեղծ էր անոր:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Փաստարանը Օրիորդին ձեռքբերելու հարցում մեջ պահելով բոլորը...

Սիւզան այս անակընկալին առջև սարսուռն եւ աժգոյն՝ վարանոտ ձեռով...

— Թող Ձեր բլույտ մը մնայ ինձ, եւ այսպէս ամուսնացան :

Թարգմ. Վ.Ա.Զ.Բ.Մ. (Մնացեալը յաջորդով) :

Ա.Զ.Գ.Ա.Յ.Ի.Ն

Ե Ա Ր Ք Ե Ր

ԱՂԷՔԱՆԳՐԻՆ

Աղէքսանդրի ազգայնաց Պատ. Երեսփոխանական Ժողովոյ ընտրութիւնը...

Անցեալ շաբթու Գեր, Առաջնորդ հօր նախագահութեան ներքեւ Պատկ. Երեսփոխան Ժողովոյն անդամիկ գումարումը...

Հրատարակներու և ժողովոյն ներկայ եղող անդամոց ցուցակը կը յուսանք թէ մօտ օրէն պաշտօնապէս կը հազորդուի մեզ :

ԺԱՄԱՆՈՒՄ

Կ. Պոլսոյ Բերայի Ս. Երորդութեան Եկեղեցւոյն Աւագերեցը, Արժ. Տէր Յովհաննէս Աւագ Բահանայ Մը...

Կ'ըսուի թէ՛ նորին Արժանապատուութեան այս այցը իր մասնաւոր պատճառները ունի, որչափ ալ ոմանք առողջական պարզ ուղեւորութեան մը վերադարձը ուզեն :

Եթէ առիթը ունենանք տեսակցել ն. Արժանապատուութեան հետ, այն ատեն այս մասին մեր ստացած ստոյգ տեղեկութիւնները պիտի հազորդենք «Արշալոյս» ի ընթերցողներուն :

ՓՈՒՍՆ ԵՄԱԿԵՊՍՍԿԻ

Բաղաքիս Աղքատախնամ Ընկերութեան Պատ. Կործ. Ժողովոյ մէկ պաշտօնական գումարներն կը տեղականանք թէ՛ Հանգուցեալ Այբի Տիկին Տաղիա Ա. Բաշալեանի յուղարարութեան ակտը հանդիսին առթիւ, փոխան ծաղկեպսակի՝ 40 զը ողջ նուիրած է Մեծ. Տիար Սարգիս Մաճարեան :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԿՂԵՐԱՍԱՆ ԳԱՅՔԱԿՂՈՒԹԻՒՆ

Եղած է Ժամանակ մը, յորում հաւատացեալները գոյ աչքերով վերաբերում են կրօնքի պաշտօնեան :

Րարբերում են կրօնքի պաշտօնեաներուն այն թերութիւններուն վրայ, որոնք իրենց իսկ քարոզած կրօնին հիմերը խախտելու բնոյթ ունեցած են :

Ժամանակի ընթացքին հետ, մարդոց դատելու և չարը բարիէն զատելու կարողութիւնն ալ զարգանալով, հետզհետէ ուշադրութիւն դարցում է սքեմաւորներու գայթակղելի աշարժներուն վրայ, և օր չըլլար որ ի՛նքն ի՛նքն մը մէկ անկիւնը անոնց սխրալի գործերէն մէկ երկուքը արձանագրուած չըլլայ :

Վերջերս նարոյի մէկ թերթը գայթակղական գործ մը երևան հանեց մեծազորք ազնուկով : Դէպքը տեղի ունեցած է նոյն քաղաքի Փըրանչիսկեան վանքին մէջ :

Վանքին աղթասացը՝ Հայր Պէնէտէթթօ Տը Ռօզլյու շուրջ կը դառնայ խնդիր և կը սուս ի՛նքն այդ քեմաւորը արդէն քանիցս հեղինակ հանդիսացած է քրիստոնեայ ընտանիքներու : Կը պատմուի մանաւանդ հետեւեալ դէպքը, որուն ծանրութիւնը հարկ չ'կայ շեշտելու :

Դեռատի աղիկ մը կը տառապի հիւանդութենէ մը, որուն համար վիրաբուժական գործողութիւն մը անհրաժեշտ կը թուէր : Աղիկը կը բացուի խոտախնահայրին, փըրանչիսկեան քահանայ մը, յայտարարելով որ երբէք չ'պիտի համարձակէր իր մարմինը յանձնել վիրաբույժի մը վնասութեանց :

Գահանային ակործակը կը բացուի և ելքի միջոց մը կը գտնէ : Կը համոզէ աղիկը որ վանքին հիւանդարանը գայ, ուր քահանայ վիրաբույժ մը ամենայն դադանապահութեամբ պիտի կատարէ գործողութիւնը և եկեղեցւոյ այդ պաշտօնեան ալ ամէն պէտքով պիտի ընէր :

Հէզ աղիկը ինկած է ծուլակին մէջ : Հոն ելքի մէջ յետոյ, վանականները օգտուելու են հիւանդին լիմբալիան բունէն, վայրագորէն բռնաբարելու համար զայն, առանց նոյն իսկ գարմանելու հիւանդութիւնը՝ որուն պատրաստութիւնը հոն ստրած էին օրիորդը :

Այս գայթակղութիւնը երկար ատեն դաւանի մնացած է, որովհետեւ դեռատի աղիկը խոտախնահաւատացեալ ընտանիքի մը կը պատկանէր :

Չորրորդեալ քաղաքի մը մէջ, լրագրող մը քաղաքագետին դէմ դատ բանալով 25 ֆրանկ տուգանք պահանջած է, օրուան լուրերը՝ ըստ սովորութեան, իր թերթին միջոցաւ ժողովուրդին ծանուցանելու անպարտաւորութիւնը գործած ըլլալուն համար :

Այս հաշուով եզրագոյն հայ լրագրողներն ալ պէտք է որ՝ գոնէ իրենց Առաջնորդարանին դէմ 2500 ական ֆրանկի դատ բանան, տարիներէ ի վեր հայ ժողովուրդին բացի վաճառելի . . . թերթիներէ, կանոնաւորապէս լուր մը հազորդած չ'ընեն ընուն համար իրենց միջոցաւ :

Լուսրա 15 փետր. — Աստղաւարտ Լի սերերը Լիւսի ունեւարով գործարարներու պարապրեկէն առաջ գալիս Լիւսի ինքնուրուի կարգադրութիւն մը ընելու յարմար մը տեսնուած է աստղաւարտի փախուցումը :

Լուսրա 15 փետր. — «Թայլը» Թեհերանէն կը տեղեկանայ թէ՛ երեք Ռուս Սպաներ երկու արագաւարտ քննադատներով 27 խազախներու հետ միասին Պարսկական սահմանագրի սահմանը պարսկական մասնաւոր պաշտօնեաներուն կողմէ եղած բողոքներուն :

Բարից 15 փետր. — Երուսաղէմ մասնաւոր կը վիճարանի մեծ սերունդի պաշտօնեան երկարաւոր լիւսիսի ունեւարի ընթացքի մասին :

Կ. Պոլիս 16 փետր. — Վանէն առնուած յորտերուն մայրով՝ բարձր գործարարները 300 հրացան և 300-000 փախուց տեսնուած են :

Մարտի 17 փետր. — Սպանիա երկու գումարակ գործարարի կը դրկէ ղեպի Մարոք :

Կ. Պոլիս 17 փետր. — Պարսիկ կառավարութիւնը կը հարանի Միջագետքի Կ. Պոլսոյ Դեպարտման կոյուղեղուն :

Լուսրա 18 փետր. — քաղաքի մարտի 2 ին Պարսից պիսի մեկնիւնորին Արշալոյսի քաղաքի յետոյ Տանքուրիսի և Նորվեկիսի պիսի այցելի :

Կ. Պոլիս 18 փետր. — Պոլսի Զիբուրի Հիւսիսային Լուրի պիսի, արտաքին գործոց քաղաքացիական ղեկավար անուանուած է, հանգուցեալ Նորի պիսիի տեղ :

Ս. Բեքերայուրի 19 փետր. — Չորալար Շաքիլով հոս հասար իր տեղեկագիր մասնաւորապէս հաւար Կովկասի հաւար սրահարուած գիւնտարական գործակալ մասին . օրաքերերը Ռուսիոյ հետ թրակական պատերազմի մը կարեւորութիւնը վեճիկ կը ձգեն :

Բարից 19 փետր. — Օսուր հեռագիրները Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ եղած խնդրոյն կարգադրութիւնը պատերազմով պիսի վերջանայ կ'ըսեն :

Ս. Բեքերայուրի 20 փետր. — Չորալար Սոքսեյ մահուան դատարարութեամբ է. Չորալար Յոգ պարսկական արժանացած է, և Չորալար Ռեյս և Չորալար անպարս արժանացած են :

Պարսկականները Զարեհ պիսի խնդրեն, որպէսզի Սոքսեյի պատերազմը սարսաղութեամբ քերտարգելութեան փոխարկուի :

Վիեննա 20 փետր. — «Երեմեան պար» պաշտօնաւորները կը ծանուցանեն թէ՛ պաշտօնեան երկարաւոր գծին հաստատուելու Աւստրիոյ դիրքին վրայ առաւելութիւն մը չ'պիտի թերեւ, Մակեդոնիոյ հաւար քարտէսագրութեան պահանջելու առթիւ :

Լուսրա 21 փետր. — Հանքի գործարարներուն աշխատանքի օրակալ ժամերը 8 ի վերածելու հաւար պատարասում ծրագիրը առաջին ընթացումով ֆուտուրիստներու պատասխանաբար քաղաքացի էր :

Լուսրա 21 փետր. — Անգործ աշխատանքներու քրտ յոյճերը գրաստանի հաւար 300 գործեր Սոքսեյի ղեկավարուած :

Ս. Բեքերայուրի 21 փետր. — Թուրքիոյ և Ռուսիոյ մէջ պատերազմի մը հարանակարարութիւնը պաշտօնապէս կը կերտուի :

Ս. Բեքերայուրի 21 փետր. — Տեհերանի պաշտարի մը վերահասար ծայր տուած է :

Ս. Բեքերայուրի 21 փետր. — Երեստան և հիւսիս կողմից անարաւարտ են, որովհետեւ իրօքս մեծ դոմիսի և Կ. Սոքիսի կեանքի ղեկ կը դարձնեն կողմ :

Կ. Պոլիս 21 փետր. — Թուրքիոյ մէկ պատերազմաւոր միայն պիսի ղեկ Գործու, Կերտան կայսր քարտէսագրութեան հաւար :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Գահիք, Տ. Տ. Ա. Չար միջոց ուղղած նամակին մէջ Օրիորդի նախ եւ առաջ խնդրոյ առարկայ անձին ղեկեցէք. ուղղա՞նք թիւեր այդ կը պահանջէ կարծենք, եթէ իր արդարացումները Ձեզի ընել չ'ուզէ, այն ատեն հանրութեան դատաստանին կը յանձնենք Ձեր նամակը, Աւելի համարող և լուրջ շարժելով ինքզինքնից բարձրացուցած կ'ըլլաք, մի՛ կ'արժէք թէ՛ դիւրաւ պիտի հաւանինք ո՛ր և է գոտակարգի պատկանող ընտանիք մը քանակու յատկութիւն ունեցող հարուածներ ստոր ու ստոր սեղանի մեր թիւերին միջոցաւ :

Մեր խիղճը չ'ենք կրնար արդարացնել այդպիսի քայլի մը առջեւ, բայց Ձեր փութկոտութեան վրայ ալ ներողամիտ աչքով կը նայինք. դիտարկելով որ Ձեր յուսացած թիւերէն՝ կարծուածէն շատ աւելին հանդիպած ըլլալու էք և գիպտոսի քիչ կամ շատ ապերախտ հողին վրայ :

Ձեր իրաւունքները միշտ օրինաւոր միջոցներով պաշտպանել սկզբունք ըրէք Ձեզի, մի՛ վարանիք երբէք՝ նոյն իսկ ի հարկին կրցածուց չափ խիղճաբէն ինքնապաշտպանութեան դիմելու, երբ խիղճը իբրև մարդ Ձեր իրաւունքները պաշտպանելու շուրջ կը դառնայ : Բայց չափազանցութենէ զուշացէք՝ երբ Ձեր ակնարկած գործին մէջ ուրիշներու նման գորաւոր պատճառներ գոյութիւն չ'ունենին . . . :

ՏՕՔՔ ԵՍՔԻ Լ. ՃԵՔՔՔԱՆ

ՇԱՐԱ ՆՈՒՊԱՐ ԲԱՃԱ. ԹԻՒ 20

Ամերիկայի համալսարաններէն վկայեալ և անուանի հիւանդանոցներու մէջ գործնական փորձառութիւն ստացած բժշկուհի . յաջողակ վերահատ՝ ենթակային առանց ցաւ պատճառելու :

Մանկաբարձուհի և մանագէտ՝ կանանց ծննդական գործարաններու և ակորդիոնեան ակտիւ, իսկ մանուկներուն՝ ամէն տեսակ հիւանդութիւններու :

Կատարեալ ինամբով և ղիտական նորագոյն մեթոտներու շնորհիւ հիմնապէս կը բժշկէ իր ինամոց յանձնուած հիւանդները :

Հիւանդ կ'ընդունի անկն օր կու օրէ յետոյ ժամը 2-5

Ամէն երեկոս ակտիւ ակտիւ գործարան :

# ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՄԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷԲԻՅԷ



## ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂԱՐԱՐԲ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է :

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարետներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին :

Պարսկական ամենաընտիր թէմպէթի ալ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալիլ է :

Մեր վաճառատունը վերջապէս, զիններու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որչաճ ապրանքներուն թարմութեամբ անմրցելի է, սրուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂԱՐԱՐԲ

## ՍԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՍՏՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց . Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկըրներն են և ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է :


400 և աւելի վիսյական եւ մեքանիզմով վարձատրուած, Երաշխատուող մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսի մէջ ստացած է .  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻԲԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ՆՏԻՂԱՆԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ,  
ուշադրութիւն դարձնել  
իւրաքանչիւր մեքենայի  
վրայ Սինկըրի յասկանշիմ



ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Ձրի դասեր և նորոգութիւններ, Սինկըր մեքենայի համար, յաճախորդաց տուններուն մէջ :

Վճարմանց զեւրութիւն

Փոխանակութիւն հիներու և նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

### ԾԱՆՈՒ ԳԻՐՔԵՐ

ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՄԱՏՆԱԴԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ  
« 2 Հիւլէն 50 »

Ժողովուրդին Մատենադարանի գրքակիրան հեղինակն է Տ. Ա. Պալեան, եզրագրողը քաջ ծանօթ իր հրատարակութիւններով և յօդուածներով: Թրքուհին պատկեր մ'է Ուրֆայի կոտորածին, և Հիւլէն եզրագրողի հայութեան առաջին օրերուն մի մանրանկարը յեղափոխական գործունէութեանց վրայ խորհրդածութիւններով: Դիմել « Արշալոյս » ի խմբագրութեան կամ ուղղակի հեղինակին, հասեալ հասցեով:

A. BALIAN

(Egypte) Le Gaire

### Մ Ի Հ Ր Ա Ն Ս Ս Գ Ա Ե Ա Ն

Spécialiste pour les cheveux  
ՇԱՐՄ ԱՊՏ ԷԼ ԱՉԻՉ ԹԻԻ 5.

Մինչև հիմայ եղած փորձերով հաստատուած է որ Փափագ Օրիկ կամ Պիթ Օրիկ եւ անոնցմէ մասնաւորապէս պատրաստուած հեղուկներուն գործածութիւնը սքանչելի արդիւնք տուած է՝ թէ՛ մազերը չի թափելու և թէ՛ երկնայնելու համար: Միակ դարմանն է այս պատրաստութիւնը՝ անիծները, ոչիւններն ու մազերու արմատներուն վրայ բոյն դրած միջրոպները սպաննելու:

Մինչև ցարդ ինձ զիմողներն վերջին ծայր գոն մնացած ըլլալով՝ յուսով եմ որ յետ այսու ալ զժգոհ ըլլալու պատճառ մը չ'պիտի ունենան:

Անխարդախ ու մեծ խնամով պատրաստուած Պալատի ամենաընտիր մազի ներկերուն ամէն գոյններէն ալ կարելի է գտնել իմ վաճառատունս:

Դիմեցէ՛ք, փորձեցէ՛ք և գոն պիտի մնաք:  
Մ. ՍԱԳԱՆԱՆ

### ՄԵԾ ՍՐՇԱՐԱՆ ԼԱՅԿԱԿԱՆ

GRAND CAFE ARMENIEN (Le Caire)

Սայն Սրճարանը որ Միսան էլ Խաղնէսարի օդատուն հրապարակի միւս կը գտնուի, իր մաքուր և ընդարձակ տեսակի սնունդով մէջ յարմարագոյններէն մին է հանգստեան ժամանակ անցնելու:

Սրճարանը յաճախողներ վերոյիշեալ առաւելութիւններէն զատ հոն պիտի գտնեն նաեւ շաւարջի ընկերներ, ճորտ և ընտիր պիւրաթաներ և անքերի սպասարկութիւն :

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ  
ՄԻՍԱՔ ՍԱԳԱՆԱՆ

# ԵՐԵՎԱՆ

ՅԱԽԱՐԱԿԱՆ ԱՄԱՐԵՐ

ՅԱՅՏԻՎ ԳՐԱՆՈՒԿ ԳՐԱՆՈՒԿ ԳՐԱՆՈՒԿ ԳՐԱՆՈՒԿ  
Բաժնեկից ամեն ճիշտ հարկերով և քաջ ծանօթ իր հրատարակութիւններով և յօդուածներով: Թրքուհին պատկեր մ'է Ուրֆայի կոտորածին, և Հիւլէն եզրագրողի հայութեան առաջին օրերուն մի մանրանկարը յեղափոխական գործունէութեանց վրայ խորհրդածութիւններով: Դիմել « Արշալոյս » ի խմբագրութեան կամ ուղղակի հեղինակին, հասեալ հասցեով:

Գրքերի և ամեն ճիշտ հարկերով և քաջ ծանօթ իր հրատարակութիւններով և յօդուածներով: Թրքուհին պատկեր մ'է Ուրֆայի կոտորածին, և Հիւլէն եզրագրողի հայութեան առաջին օրերուն մի մանրանկարը յեղափոխական գործունէութեանց վրայ խորհրդածութիւններով: Դիմել « Արշալոյս » ի խմբագրութեան կամ ուղղակի հեղինակին, հասեալ հասցեով:

Գրքերի և ամեն ճիշտ հարկերով և քաջ ծանօթ իր հրատարակութիւններով և յօդուածներով: Թրքուհին պատկեր մ'է Ուրֆայի կոտորածին, և Հիւլէն եզրագրողի հայութեան առաջին օրերուն մի մանրանկարը յեղափոխական գործունէութեանց վրայ խորհրդածութիւններով: Դիմել « Արշալոյս » ի խմբագրութեան կամ ուղղակի հեղինակին, հասեալ հասցեով:

# Տ Պ Ա Ր Ա Ն

ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ  
ՀԻՄՆՈՒԱԾ 1900 ԻՆ

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ Է Ի ՇԱՐՄ ԱՊՏ-ԷԼ-ԱՉԻՉ  
ՇԷՐԻՑ ԲԱՇԱՅԻ ՊԱՐՏԷՉԻՆ ԴԷՄ

Կ'ընդունի տպագրական ամէն տեսակ յանձնարարութիւններ և նամակագրութիւն, աղբարարութիւններ, այցեքարտեր, մահազրներ, գիրքերու և պրոչիւրներու տպագրութիւններ և այլն:

Յանձնարարութեանց համար սակարկուած գնոյն կէսը կանխիկ է, իսկ մնացեալ կէսը յետ տպագրութեան՝ յանձնման պահուն վճարելի է:

Յանձնարարութիւնք ամենայն ճշգրտահարկութեամբ պիտի կատարուին  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ